Հաստատում եմ՝

Երևանի պետական համալսարանի

գիտական հարցերի գծով պրոռեկտոր

Ռ. Բարխուդարյան

25 փետրվարի 2026 թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Սաթենիկ Ավագի Տեփանյանի ԺԹ.00.01- «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ, հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման «Անձի ինքնության, հանդուրժողականության և էկզիստենցիալ ամբողջականության փոխկապակցվածությունը ազգային միատարր և բազմատարր միջավայրում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ներկայացված ատենախոսությունը արտացոլում է ժամանակակից հոգեբանության արդիական և սոցիալապես նշանակալի հիմնախնդիրների համակողմանի ուսումնասիրություն: Հետազոտության թեման արդիական է բազմամշակութային փոխազդեցությունների ակտիվացման, միջէթնիկական շփումների սրման և հանդուրժողականության սոցիալ-հոգեբանական նշանակության աճի պայմաններում: Ազգային միատարր և բազմատարր միջավայրերում ձևավորված անձանց ինքնության, հանդուրժողականության և էկզիստենցիալ ամբողջականության փոխկապակցվածության հարցը դեռևս բավարար չափով ուսումնասիրված չէ:

Աշխատանքը ունի հստակ ձևակերպված նպատակ, խնդիրներ, վարկած և ենթավարկածներ, հիմնված է ժամանակակից տեսամեթոդաբանական մոտեցումների վրա և ներառում է բավական ներկայացուցչական էմպիրիկ ընտրանք (N=200):

մշակումը իրականացված է արդի մեթոդներով (IBM SPSS), իսկ ստացված արդյունքները տրամաբանականորեն մեկնաբանված են: Դրական է գնահատվում հայ և ռուս ուսանողների համեմատական վերլուծությունը ազգային միատարր և բազմատարր միջավայրերի համատեքստում, ինչպես նաև էկզիստենցիալ ամբողջականության ներգրավումը հանդուրժողականության և ինքնության ուսումնասիրության շրջանակում, ինչը ապահովում է աշխատանքի գիտական նորույթն ու միջդիսցիպլինար արժեքը: Աշխատանքի գործնական նշանակությունը հիմնավորված է մշակված հոգեբանական ծրագրի կիրառելիությամբ կրթական և խորհրդատվական միջավայրերում:

Ներածությունում լուսաբանված են աշխատանքի գիտական նորույթը, օբյեկտը, առարկան, վարկածը իր ենթավարկածներով, տեսական և գործնական նշանակությունը, ձևակերպված են պաշտպանության ներկայացվող դրույթները, անդրադարձ է կատարվել արդյունքների փորձաքննությանը և ատենախոսության կառուցվածքին:

Ատենախոսության առաջին՝ «Անձի ինքնության և հանդուրժողականության տեսական-մեթոդաբանական հիմքերը» գլխում ներկայացված և վերլուծված են ինքնության տեսական ու մեթոդաբանական հիմունքները, բացահայտված է դրա էությունն ու տեսակները: Գլխում անդրադարձ է կատարվում նաև էթնիկական նույնականության հիմնախնդրին և դրա զարգացման առանձնահատկություններին տարբեր սոցիալ-մշակութային միջավայրերում: Վերլուծվում են հանդուրժողականության հոգեբանական առանձնահատկությունները, դրա սահմանումն ու տեսակները, ինչպես նաև միջէթնիկական հանդուրժողականության և ինքնության, մասնավորապես՝ էթնիկական նույնականության փոխկապակցվածությունը: Սույն գլխում քննարկվել են նաև ուսանողության հոգեբանական նորագոյացությունները, որոնք պայմանավորում են անձի կարևոր կառուցվածքների զարգացումը և հասարակական հարաբերությունների ու որակների ձևավորումը, ինչպես նաև երիտասարդության շրջանում ինքնության և հանդուրժողականության առանձնահատկություններին նվիրված գիտական հետազոտությունները:

Ատենախոսության երկրորդ՝ «Երիտասարդության էկզիստենցիալ ամբողջականությունը ազգային միատարր և բազմատարր միջավայրերում» գլխում ներկայացված և վերլուծության են ենթարկված երիտասարդության էկզիստենցիալ ամբողջականության առանձնահատկությունները ազգային միատարր և բազմատարր միջավայրերում: Հեղինակը ներկայացնում է էկզիստենցիալիզմի և էկզիստենցիալ հոգեբանության տեսական հիմքերը, ուսումնասիրում դրանց հիմնական խնդիրներն ու անձի էկզիստենցիալ բնութագրման մոտեցումները՝ համադրելով դրանք երիտասարդության շրջանում անձի էկզիստենցիալ բնութագրերին նվիրված մի շարք հետազոտությունների վերլուծության հետ: Գլխում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում նաև հայերի և ռուսների էթնոհոգեբանական առանձնահատկություններին՝ որպես ազգային միատարր և բազմատարր միջավայրերի ներկայացուցիչների, դիտարկելով դրանք ուսումնասիրվող խնդրի համատեքստում: Վերլուծությունը թույլ է տալիս բացահայտել հայերի և ռուսների անհատական էթնոհոգեբանական առանձնահատկությունները և ցույց է տալիս, որ դրանք տարբեր դրսևորումներ են ստանում՝ կախված միջավայրի առանձնահատկություններից:

Ատենախոսության երրորդ՝ «Ազգային միատարր և բազմատարր միջավայրում անձի ինքնության, հանդուրժողականության և էկզիստենցիալ ամբողջականության փոխկապակցվածության էմպիրիկ հետազոտություն» գլխում ներկայացված է փորձարարական հետազոտությունը որի նպատակն է բացահայտել ինքնության, հանդուրժողականության և անձի էկզիստենցիալ ամբողջականության միջև առկա փոխկապակցվածությունները ազգային միատարր և բազմատարր միջավայրերում հայ և ռուս ուսանողության օրինակով: Մանրամասն ներկայացված է հետազոտության իրականացման ընթացքը՝ հետազոտության ծրագիրը և փուլերը, ընտրանքի բնութագիրը, հետազոտության մեթոդները և մեթոդական գործիքակազմի հիմնավորումը, ինչպես նաև ստացված արդյունքների քանակական և որակական վերլուծությունը: Ներկայացված են հետազոտության արդյունքների համեմատական և վիճակագրական վերլուծությունը, այդ թվում՝ ռեգրեսիոն վերլուծությունը: Սույն գլխում

ներկայացված են նաև հոգեբանների և ուսանողների համար մշակված գործնական առաջարկությունները և հանդուրժողականության ձևավորմանն ուղղված ծրագիրը:

Աշխատանքը ամբողջական է իր տրամաբանության և շարադրանքի մեջ ընտրված մեթոդակազմը և վերլուծության մեթոդները համապատասխանում են առաջ քաշված խնդիրներին, վարկածին, իսկ պաշտպանությանը ներկայացվող դրույթները բխում են եզրակացություններից:

Աշխատանքի հիմնական դրույթները բավարար կերպով արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված 9 գիտական աշխատություններում:

Սաթենիկ Տեփանյանի ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և արտացոլում է հիմնական դրույթները:

Լիովին տրամաբանական է, որ այսպիսի մեծ ծավալով գիտահետազոտական աշխատանքը չէր կարող զերծ մնալ վրիպումներից և բացթողումներից, մասնավորապես՝ ունենք նաև որոշ դիտողություններ և առաջարկություններ:

1. Սաթենիկ Տեփանյանի ատենախոսական հետազոտությունը, անկասկած, նվիրված է միատարր և բազմատարր ազգային միջավայրում անձնական ինքնության, հանդուրժողականության և էկզիստենցիալ ամբողջականության փոխկապակցվածության բնութագրերի արդիական և կարևոր հիմնահարցին: Այնուամենայնիվ, պաշտպանության համար ներկայացված որոշ եզրակացություններն ու առաջարկությունները պահանջում են լրացուցիչ պարզաբանում այն մասին, թե արդյոք դրանք կարող են ընդհանրացվել բոլոր ռուս և հայ երիտասարդների համար, քանի որ ուսանողները ներգրավված են ակադեմիական միջավայրում, մի կարևոր գործոն, որը հեղինակը անտեսում է:
2. Հետազոտության ընտրանքը պահանջում է հստակ հիմնավորում: Արդյո՞ք որպես 18–22 տարեկան (միջինը՝ 20.8) երիտասարդ ուսանողների տարիքային շրջանը համարվում է անձի ինքնության կայունացման, էթնիկ նույնականության խորացման, հանդուրժողականության ձևավորման և էքզիստենցիալ որոնումների առավել ակտիվ փուլը:

3. Ատենախոսության տեսական բաժինները ներկայացված են դասագրքային ոճով, ինչի մասին վկայում է գրականության ցանկը, որտեղ գերակշռում են դասագրքերը և մենագրությունները: Հեղինակը անտեսել է թեմային վերաբերող ժամանակակից հոդվածները, այդ թվում՝ հայերեն լեզվով արդիական հոդվածները (Օրինակ՝ Ն. Հակոբյան. Անձի ինքնության բնութագիրը սոցիալական միջավայրում, 2023; Ն. Խաչատրյան, Անձի հոգեբանությունն այսօր. ուսումնասիրման առարկան և մարտահրավերները, 2016): Մասնավորապես բացակայում են հանդուրժողականության վերաբերյալ հայ հեղինակների բազմաթիվ աշխատությունները:
4. Ատենախոսությունում էջ 4, 5, 6 և բազմաթիվ այլ էջերում հեղինակների մեջբերումներում բացակայում են հեղինակների անվանումները, ինչը բարդացնում է հեղինակներին նույնականացնելու գործընթացը: Նմանատիպ մոտեցում հնարավոր է նաև դասական հեղինակների օրինակներում:
5. Ատենախոսության համապարփակ վերլուծությունը ցույց տվեց, որ առանձին բաժինների եզրակացություններն ու ամփոփումը ավելի հստակ ձև և բովանդակություն ունեն, քան 143-146 էջերում ներկայացված ընդհանուր եզրակացությունները: Օրինակ՝ 1, 2, և 3-րդ եզրակացությունները արձանագրում են կատարված աշխատանքը և ներկայացված են հետևյալ կերպ՝ «ընդգծված», «հիմնավորված», «վերլուծված», «ձևակերպված», այլ ոչ թե ստացված արդյունքներ և փաստեր:

Սակայն վերը նշված դիտողությունները ոչ մի կերպ չեն արժեզրկում Ս. Տեփանյանի ատենախոսության նշանակությունն, գիտական նորույթը ու բովանդակությունը: Մեր կարծիքով դրանց հաշվառումը միայն կնպաստի հետագա գիտական աշխատանքի բարելավմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սաթենիկ Ավագի Տեփանյանի «Անձի ինքնության, հանդուրժողականության և էկզիստենցիալ ամբողջականության փոխկապակցվածությունը ազգային միատարր և բազմատարր միջավայրում» ԺԹ.00.01- «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը

ինքնուրույն և ավարտուն աշխատանք է, որն ունի տեսական և կիրառական նշանակություն: Ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ Սաթենիկ Ավագի Տեփանյանը արժանի է հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ ԺԹ.00.01- «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ:

Աշխատանքը քննարկվել և կարծիքը հաստատվել է 2026թ. փետրվարի 18-ի ԵՊՀ ընդհանուր հոգեբանության ամբիոնի թիվ 7 նիստում:

Նիստին մասնակցել են՝ հ.գ.դ., պրոֆ. Հ. Մ.Ավանեսյանը, հ.գ.դ., պրոֆ. Ա. Բ. Լոքյանը, հ.գ.թ., պրոֆ. Վ. Ռ. Պապոյանը, հ.գ.թ., դոցենտ Դ. Յ. Սարգսյանը, կ.գ.դ., դոցենտ Լ.Ս. Ստեփանյանը, հ.գ.թ., դոցենտ Դ. Ռ. Հայրապետյանը, հ.գ.թ., դոցենտ Հ. Ռ. Հովհաննիսյանը, մ.գ.թ., դոցենտ Ս. Վ. Հովհաննիսյանը և դասախոս Ա. Ս. Գալստյանը:

Նիստի նախագահ, ամբիոնի վարիչ՝ **Հ.Մ. Ավանեսյան**

Նիստի քարտուղար՝ **Մ.Դ.Մուրադյան**

Հ.Ավանեսյանի և Մ.Մուրադյանի ստորագրությունները հաստատում եմ՝

ԵՊՀ Գիտական քարտուղար, բ.գ.թ. Մերի Հովհաննիսյան

ք. Երևան 25/02/2026